ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար անխափան սնուցման աղբյուրների և սկաներների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/37» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«25» օգոստոսի 2022թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ – շինարար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/37» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ-ի և ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

1.1 ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց 1-ին չափաբաժնի մասով ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ նաև Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

1.2 ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման նպատակով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ

- էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ դիմում հայտարարության չորրորդ նախադասության 2)-րդ կետում բացակայում են **«անբարեխիղճ մրցակցություն,»** բառերը,

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված 1.2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- 2-րդ չափաբաժնի մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը 2-րդ չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, մերժված հայտերի և ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

-1-ին չափաբաժնի մասով ԱՆՆԱՐԿԱ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 1-ին չափաբաժնի մասով մյուս մասնակիցների՝ ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ի, Տելեկոմ Սիստեմս ՍՊԸ-ի, Դիավանտ ՍՊԸ-ի, ՋԻ ՋԻ ԿՈՆՑԵՌՆ ՍՊԸ-ի հայտերը մերժել,

-գնման ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

Խորեն Պետրոսյան

Արթուր Թամրազյան

Տիգրան Զեյնալյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Գայանե Դադիվանյան